

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2018-2019 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ **վճարովի** հիմունքներով ասպիրանտուրայի ընդունելություն՝ հետևյալ մասնագիտություններով.

Մասնագիտության դասիչ	Մասնագիտություն
Ը.00.01	Ընդհանուր տնտեսագիտություն -տնտեսագիտության տեսություն
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում. - գործարար կառավարում - կոմերցիա և բիզնեսի կազմակերպում - միկրոէկոնոմիկա - բնօգտագործման տնտեսագիտություն
Ը.00.03.	Ֆինանսներ ,հաշվապահական հաշվառում. - ֆինանսներ
Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն -միջազգային տնտեսական հարաբերություններ
Ը.00.08	Մաթեմատիկական տնտեսագիտություն -տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

- 1) Դիմում՝ ՀՊՏՀ ռեկտորի անունով:
 - 2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
 - 3) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
 - 4) Օտար լեզվի և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
 - 5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):
 - 6) Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):
- Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հունիսի 27-ը (ներառյալ):

Ուսման վարձը կազմում է տարեկան 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հասցեն՝ ք. Երևան - 25, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
 հեռախոս՝ 593-454
 Ռեկտորատ